

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 177

**Նոր անուն ստանալ** – Ուսումնասիրելով որդեգրութեան բնոյթը, այս դասում մենք նկատի ենք առնում Աստուծոյ ընտանիքի որդեգրութեան օրինութիւնները: Նրանք որոնք որդեգրուում են Աստուծոյ ընտանիքի մէջ ստանում են մի նոր անուն՝ մի անուն որը ներկայացնում է նրանց նոր կեանքը: Աստուածաշնչային անուններ ներկայացնում են կարեւոր տեղեկութիւններ նրա առթիւ որը կրում է այդ անունը (Ելից 3:14-16): Ոչ միայն Հրէաները այլեւ բոլոր ազգերի ժողովուրդը որոնք հաւատում են Աստուծուն ու Նրա խոստումներին կոչուում են Նրա անունովը (Երկրորդ Օրինաց 28:9-10, Եսայիա 43:5-7, Երեմիա 14:9, Ամովս 9:11-12): Նոր Կտակարանում, նրանք որոնք հաւատացին Քրիստոսին սկզբում ճանաչեցին որպէս «Ճանապարհի» հետեւողները (Գործք Առաքելոց 9:2, 19:9, 23, 22:4, 24:12, 22): Եւ յետագայում նրանք կոչեցին Քրիստոնեաներ (Գործք Առաքելոց 11:26, 26:28, Ա. Պետրոս 4:16): Այս անունը ոչ միայն նշանակում է որ մենք Քրիստոսի հետեւողներն ենք, իսկ նաեւ թէ մենք պատկանում ենք Նրան՝ լինելով Նրա ընտանիքի անդամները, եւ որոնց վրայ Նա ունի իշխանութիւն (Յայտնութիւն 14:1, 22:3-4):

**Որդեգրութեան Հոգին ստանալ** – Աստուածաշունչը ուսուցանում է որ նախքան մենք փրկուինք, նախքան հաւատայինք Քրիստոսին, մենք Աստուծոյ թշնամիներն էինք, մեղքի ծառաներ, եւ վախի վիճակում (Ծննդոց 3:8-10, Հռովմայեցի 1:32, 6:20, Եբրայեցի 2:15, Ա. Յովհաննէս 4:18): Բայց Հռովմայեցի 5:1ում Պօղոսը գրում է թէ՛ «Արդ մենք՝ հաւատքով արդարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը»: Քրիստոսի միջոցով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենալու հետ միասին, մենք որոնք որդեգրուել ենք որպէս Աստուծոյ զաւակներ նաեւ ստացել ենք Աստուծոյ Հոգին՝ որը կոչուում է որդեգրութեան Հոգին, որով զօրադրուում ենք (հնարաւորութիւնն ունենք) աղաղակել եւ կոչել Աստուծուն «Աբբա, Հայր» (Հռովմայեցի 8:14-17, Գաղատացի 4:4-7, Եփեսացի 2:18, Եբրայեցի 10:19, 22): «Աբբա» բառը Արամական բառ է, եւ մի ոչ պաշտօնական եւ շատ մտերիմ ձեւն է որը մէկը կանչում է իր հօրին: Իր ամենամոայլ ժամանակում, Յիսուսը Ինքն գործածեց այս բառը երբ աղօթում էր Աստուծուն (Մարկոս 14:36):

**Ներքին վկայութիւն** – Առաւել բազմաթիւ ապացոյցներից որը Աստուածաշունչը ներկայացնում է որ մենք փրկուած ենք ու Աստուծոյ որդիներ՝ Հռովմայեցի 8:16ում Պօղոսը գրում է թէ՛ «Նոյն Ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք»: Այս ճանաչած է որպէս Հոգու ներքին վկայութիւնը (Ա. Յովհաննէս 3:24): Այս մի ներքին, գերբնական ձայն չի, ոչ էլ մի վկայութիւն որը Աստուծոյ Խօսքից ջոկ է կամ էլ դրան հակառակ: Իսկ, Հոգին վերցնում է Աստուծոյ արտաքին (առարկայական) Խօսքը եւ հաստատում է դրա ճշմարտութիւնը մեզի ներքնապէս (ենթակայական), լուսաւորելով ու ցուցադրելով մեզի որ այն ինչ որ գրուած է ճշմարիտ է եւ վերաբերում է մեզի որպէս Աստուծոյ որդիք:

**Աստուծային նախախնամութիւն** – Ուշտմինստորը Հաւատոյ Հանգանակը նշում է թէ մենք «...ողորմում, պահպանում, հայթայթում, եւ խրատում են Նրանից ինչպէս մի Հօրից»: Այս նկատի ունի մեր հանդէպ եղած Աստուծոյ խնամքը, սփոփանքը, գթութիւնը, պաշտպանութիւնն ու հայթայթումը՝ որպէս Նրա որդեգրուած որդիք (Սաղմոս 3:5, 4:8, 103:13, Մատթէոս 6:31-33, Հռովմայեցի 8:31-32, Բ. Կորնթացի 1:3-4, Փիլիպպեցի 4:6-8): Մի ուրիշ նշան որ մենք Աստուծոյ ճշմարիտ զաւակներն ենք Նրանից խրատանք ստանալն է (Եբրայեցի 12:5-8, 11): Բոլոր Աստուծոյ ճշմարիտ որդիք շուտ կամ ուշ կ'կրեն որոշ ձեւի խրատանք իրենց երկնային Հօրիցը, որը ծրագրել է այս մեր սրբութեան աճման համար: Եթէ ոչ, մենք կ'լինէինք խորթ որդիք՝ այսինքն ամուսնութիւնից դուրս ծնուած, ինչպէս Իսմայէլն էր Աբրահամին:

**Կնքուած մինչեւ փրկանատրութեան օրը** – Բոլոր նրանք որոնք Հոգուցը ծնել են նաեւ Հոգովը կնքուած են՝ որն Աստուծոյ մեր սեփականութեան ներքին ու անջնջելի նշանն է, եւ վաւերացնում է մեզ որպէս Նրա զաւակները: Բացի այդ, Սուրբ Հոգին մեր հանդէպ եղած Հօր սկզբնական գրաւն կամ կանխավճարն է՝ որը երաշխատում է մեր կատարեալ փրկանատրութիւնը (Բ. Կորնթացի 1:21-22, Եփեսացի 1:13-14, 4:30): Թէպէտ այս կեանքում մենք կ'անցնենք փորձութիւններից, կ'մեղանջենք ու կ'ընգնենք, եւ կ'խրատուենք մեր երկնաւոր Հօրիցը, սակայն եթէ մենք Նրա ճշմարիտ զաւակներն ենք եւ ուստի Հոգովը կնքուած ենք, ապա Նա խոստացել է որ մեզի երբէք չի դուրս հանի Իր ընտանիքից, այլ թէ կ'պահպանի մեզ մինչեւ վերջը, եւ կ'փառաւորի մեզ (Յովհաննէս 6:37-54, 10:27-30, Հռովմայեցի 8:35-39, Փիլիպպեցի 1:6, Բ. Տիմոթէոս 4:18, Յուդա 1:1):

**Արդէն ու ոչ դեռ** – Մեր որդեգրութեան մէջ տեսնում ենք աստուածաշնչային «արդէն ու ոչ դեռ» գաղափարը, ուր մենք արդէն որդեգրուել ենք որպէս Աստուծոյ զաւակներ ու ժառանգներ, եւ արդէն ստացել ենք Սուրբ Հոգուն. սակայն մեր որդեգրութեան կատարեալ իրականացումը դեռ ապագայ է: Սուրբ Հոգին կատարեալ փառքի նախահամն է (համտեսն է) որը դեռ պիտի յայտնուի. Նա մի երաշխիք է որ ամբողջ ժառանգութիւնը գալիս է, որը Աստուած վերապահել է մեզ համար երկնքումը՝ որը անեղծ, անարատ եւ անթառամ է (Հռովմայեցի 8:17-25, Ա. Պետրոս 1:3-7):